

մոս՝ որ Ռուսիոյ ինքնատապալումէն և Պրէստ-Լիթովսքի ամօթալի դաշինքէն Եւրոպայում գոռոզարար կը գոռար՝ «Թէ որ թշնամին հաշտութեան չգիշանի, մենք այն ատեն մեր երկաթէ ձեռնապանը և բոցաշողին սուրը մերժողներու դրան զարնելով զայն պիտի տանք աշխարհի», եօթ ամիս ետք զլիւիկոր, պարտութիւնը խոստովանելով հաշտութիւն կը խնդրէր։ Ազգերու վարչապետներ, նախարարներ դիւանագիտական ծրարներով փարիզ, Վէրսալ (1919) կը վազէին վերջնական արդարացի հաշտութեամբ աշխարհս խաղցնելու համար։ Երբեմն քաղաքական յաջողութիւն ձեռք ձգելու նպատակով, երբեմն ալ յաջողութեան մը ներշնչած վեհաձեռն զգացումներէն զրդուած խոստովանելով զհաշտութեան մէջ վաւերացուած լրբութիւնն է։ Միթէ Համաձայնականները... նաեւ մերձաւոր Արեւելքի ընկճուած, կաշկանդուած ժողովուրդները փրկելու համար չէին կոռած։ Գլխամաս, Լորտ ճորճ այդ ազնուական խոստումը վաւերացուցին, իրականացումը թողով ապագային։ Ետեւէ ետեւ իրարու յաջորդող ժողովներու մէջ՝ յաղթականները բաւական քրտնեցան իրենց արբանեակներուն ազգային պահունջներուն գոհացում տալու, արդարացիօրէն թէ անիրաւ, այդ անկարելոր հարց է, ինչպէս նաեւ իրենց աշխարհագրական ու տնտեսական դժուարութիւնները հարթելու։ Պարտուածները պատժելու համար՝ ստեղծուեցաւ ընդարձակ Բոլոնիա մը, մեծկակ Չէքո-Սլովակիա մը, նորակազմ Եւրոպ-Սլավիա մը, և Սերայեւոյի ոճիւրը վարձատրելու համար Մոնթենէկոն ալ կցեցին։ Ռուսական Տանուպեան խոշոր կառավարութիւն մ'եղաւ։ Անգլիա և Ֆրանսա արդէն այլ եւս ապահովեցին էին։ Խառնիկ անապատի ընդարձակ ծիրանի մը կը ձգէր ուսերուն վրայ։ Եւ որպէս զի հաշտութիւնը ամուր հիմերու վրայ դրուի, և

աշխարհս դարձեալ պատերազմով չաւրանի, Վիլսոնի մեծ ջանքով կը հիմնուէր Լոզանի Ազգաց Ժողովը։ Ուր քաղաքականութիւնը իր իսկ սկզբունքով կը գործէ արհամարհելով մարդկայինը, հոն արդարութիւնը չէ կարող գործակցել։ Վէրսալի, Սելրի դաշինքը ոչ թէ արդար հաշտութիւն մը հրամցուց Եւրոպայի, այլ փոխ վրէժի, ատելութեան չարագուշակ երկունք մը պատրաստեց։ Պատն յուսախարութիւն։ Եւ ահա երկունքը չուշացաւ, հազիւ քսան տարի ետք դժգոհ Եւրոպան ծնաւ Նացիզմը։

Վերջին համերկային պատերազմը, (քանի որ նախորդը համաշխարհային կոչուեցաւ), անոր անլուր աղէտները, աննախընթաց աւերներն ու սարսափը, մարդկային ամէնէն նուիրական զգացումները, արժանապատուութիւնը ընդվզեցնող, գոհակցնող ոճիւրներու տեսարանները, վերապրողներու ամենուն մտքին ու սրտին մէջ դեռ սարսուռ կ'ազդեն։

Նացի-ֆաշիզմը տապալեցաւ՝ միլիոնաւոր մարդոց և բնակչութեան անմեղներու արեւն գնովը։ Վրէժխնդրութիւնը, կոյր ատելութիւնը եղբայրասպան դաւերու, ոճիւրներու մղեց մարդկութիւնը։ Բայց իրական ոճրագործները թերեւս վաղը՝ բարձրագլուխ իրենց զոհերուն մէջ սպըրդին։ Յաղթականներուն՝ հանուր աշխարհի խաղաղութեան և արդարութեան բրոնիականտի շեփորը լոնց։ Ժողովուրդները մոռցուեցան, խնդիրը այլ եւս իրարու հետ հասկացողութեան գալու, ու դիւանագիտական լեզուով, կնճռոտութիւններ ստեղծելով՝ զուտ սեփական, իւրային շահեր ապահովելու կը ձգտին։ Մարդկութեան մեծ մասը ակնկառոյց Գերմանիոյ դէպքերուն կը հետեւի, և անշուշտ առանց բան մը հասկնալ կարենալու։ Տապալած նացիստ Գերմանիան սարսափ կ'ազդէ յաղթականներուն, որոնք այս քրտնեղման առջեւ շուարած կը մնան, և որ կը ստիպէ

Եւրոպան երկու պոքի բաժնուելու, Արեւելեան և Արեւմտեան Եւրոպա, և մի ուրիշ խօսքով Սլաւներ և Անկլո-Սաքսոններ։ Բրուսիոյ անուական բնաշնչուիլը և Արեւմտեան Գերմանիոյ Համաձայնականներուն կողմէն ակնախափարական շրջանակներու բաժնուիլը՝ կարելի է խաղաղութիւնը ապահովող դրական ու գործնական միջոց նկատել⁽¹⁾։

Լոնտոնայի և Փարիզու ժողովները (յուլ-նոյսին մէջ) ապացուցին թէ չորս մեծ դաշնակիցները շատ մը կէտերու մէջ իրարու հետ համաձայն չեն։ Եւրոպայի և Բոցտամի որոշողութիւնները լուր կրնան փոփոխութիւններու ենթարկուիլ։ Մինչեւ փոփոխութիւններու ենթարկուիլ, յիստերու գումարը աւելցան, այն-քան եւս շեշտուեցաւ անհամաձայնութեան, անվստահութեան հոգին։ Յունիսին մէջ Փարիզու ժողովը դրական ինչ քայլ առաւ։ շատ մը հակավէճերէ ետք չորս դաշնակից պետեր իրարմէ բաժնուեցան՝ յայտարարելով սովորական բանաձեւը՝ «Խորհրդակցութիւնները բաւական գոհացուցիչ դաշնակցութիւնները բաւական կնճռոտ հարցեր լուծեցին, թե-թեցուցին»։

Եւրոպայի և Բոցտամի որոշողութիւնները կը մնան իբր կարծիքներու փոխանակութիւն։ քաղաքական դէպքերու պահանջը, և մանաւանդ իւրաքանչիւր յաղթական պետութեան ուրոյն շահագիտութեան զարգացումը, հայեցակէտներու նորութիւն և վճռականութիւն կը ստեղծէ։ Ռուսիոյ սպառնալից դիրքը կը վաւերացնէ պահանջներուն անհրաժեշտութիւնը կամ

արդարացիութիւնը։ Ռուս մնացին Անգլիացի հրամանատարին Ալեքսանդրի իտալիոյ ժողովուրդին ըրած խոստումնալից յայտարարութիւնները. «քանի մը տա-ժանալից շարքերէ ետք» Խառնիկ պետեր խաղաղութիւն և արդարացի վերաբերում. անշուշտ ոչ մասնաւոր վարձատրութիւն մը տաանութ ամիս լեռներու և անտառներու մէջ գերման ուժերու դէմ մղուած պայքարին համար, սակայն արդարացի գնահատում մը հազարաւոր հայրենասէրներու զոհարարումին և Խառնիկ ժողովրդեան ֆաշիզմի դէմ անկեղծ կռուին համար։

Արդարացի խաղաղութիւն մը դիւանագէտներու տաղանդին ծնունդը չէ, այլ ժողովուրդներու, յաղթականներու՝ զիտակից, անշահախնդիր, իրապէս բարեացակամ ու հեռատես քաղաքականութիւնն է։ Ռազմասէր Բրուսիոյ ջնջուիլը, 70-80 միլիոնոց Գերման ժողովրդին նուաճումը, Հունգարիոյ, Խառնիկ նիւթապէս ու բարոյապէս ուժաթափումը, հողազրկումը՝ ընդհանուր միջազգային խաղաղութեան ազդակ մը կարելի չէ նկատել, և ոչ ալ պատմական և աշխարհագրական տուեալներու հակառակ՝ ընդարձակ Բոլոնիա մը, Եւրոպ-Սլավիա մը ստեղծելով, յաղթականները՝ որոնք չորս հինգ տարի շարունակ, պատերազմի ընթացքին, Արդարութեան Առաքելները ըլլալին շեփորեցին աշխարհի չորս հոգիներուն, արդար խաղաղութիւնը վերջնականապէս հաստատած կ'ըլլան։ Հանգուցեալ Ռուզվելտ իր վերջին վերջնաւորութեան ատեն՝ թէ որ չախալիմ, իր խօսած մէկ ճառին մէջ կ'ըսէր. «Աշխարհի վարիչները լաւ պէտք են գիտնալ որ առանց Աւետարանի հոգւոյն կարելի չէ հիմնական, արդարացի խաղաղութիւն մը տալ աշխարհի»։ Խաղաղութիւնը պէտք է հիմնել արդարութեան ու չափաւորութեան սկզբունքի վրայ, լայնօրէն գոհացում տալով ժողովուրդներու տնտեսական

1. Մեծ ֆրեդերիկի կազմակերպած Բրուսիան 1807-ին՝ թիւսիկի դաշնադրութեամբ Նաբուլէոն Ա.ի և Ալեքսանդր ցարին ձեռքով ուժեղ հարուած մ'ընդունած էր կորսնցնելով արեւմտեան գաւառները և մաս մըն ալ հարաւէն՝ որով կը ձեւանար Բոլոնիոյ Մեծ դժուարութիւնը։ Այս անգամ կը վճռուի քարտէսին վրայէն... պետութիւններու շարքէն ջնջել վերջնական զինք։

Մ Ո Ւ Ր Բ Ղ Ա Ջ Ա Ր

Հանդիպում կը հրատարակենք հոս, թարգմանաբար, Laurence Dakin Քանադացի քերթողին այս յօդուածը, զոր հեղինակը 1940ի Սպրիդինի Ի վեր պատրաստեց էր Բազմալեզու համար, բայց չէր կարողացած ուղարկել մեզի՝ պատերազմին պատճառով։ Սոյն հայաստէր, համակրելի քերթողի մասին տուած ենք արդէն քանի մը համառօտ տեղեկութիւններ, 1934, Սեպտ.-Հոկտ. թիւին մէջ (էջ 350), երբ միեւնոյն ատեն հրատարակեցինք քանի մը նմոշներ իր Ապարիտի Երազը քերթուածէն։

«Անկառնոյց կը դիտէր, նստած, կղզի մը ներկող ծոցն Ադրիոյ, ուր հագիւ վէտ վէտ ալեք մը ծըփուն կը խորտակէր լըռութիւնն աւազանիստ ափերուն»։

Սրաթուիշ արեւը, ինչպէս հրեղէն գունդ մը լայնածաւալ, դադարեցաւ եթերային Աւ պեանց սարերու վրայ, անդորր լճակին մէջ հոսելով բոցեղէն հսկայ ալիքներ։ Ձկնորս մը, հոս ու հոն ծանծաղուտ անշարժ ջուրերու մէջ, նեղ ճամբայ մը կը պրպտէր, իր փոքրիկ բերտ նաւակը յառաջ մղելու համար։ Մօտիկը, տաքարիւն ծիծառներ, վէտ վէտ ալեակները քերելով՝ կ'արձակէին ուրախութեան ճիւղեր։ Լոյսի քանի մը յետին ճաճանչներ կը սլանային տանջուած երկնքին մէջ և յետոյ կ'անհետանային ուժասպառ սլաքներու պէս։ Օրը վերջացեր էր։ Մի քանի կանգուն հեռու, մեղմիկ ջուրերու մէջ, կղզի մը երազկոտ կը նշմարուէր անդորր մթնշաղին մէջ։

Խորհրդաւոր նոճիներու ընդմէջէն, որոնք կը պատէին մենաստան մ'աշտարակաւոր, կը տեսնէի ես արեղաներ որ կը շրջէին ու կը խորհէին, իւրաքանչիւրն առանձին՝ Աստուծոյ հետ, իւրաքանչիւրն ըմբոշինելով անդորր գեղեցկութիւնը իրիկուան։ Այս այն-

քան պարզ ու խաղաղ տեսարանը իմ աչքերէս արցունք քաղեց. ու ես ըմբռնեցի սրտին անխռով անայլայլ բարախիւնը, անոր պէտքերն, ու զգացի բոկոտն արեղաներու անխօս պատգամը՝ իրենց խուզերուն մէջ. լսեցի շնչող հովիկն ու գիտցայ որ աստղերը կ'երգէին իրենց ընթացքին մէջ, և ինչո՞ւ...

«Երեկոյին կոչնակ՝

Քաղցրահունչ զանգն ընդհատեց իր խոկուններն երազկոտ»։

Բաց, երկնասլաց աշտարակէն մեղմիկ զանգակը իր կոչը կը հնչեցնէր, և արեղաները՝ մի առ մի՝ պարտէզէն կը դիմէին եկեղեցի, ուր իրենց հոգիները, լուծեան ու խուճկի ամպերու մէջէն, պիտի սլանային դէպի երկինք։ Գիտէին անոնք թէ հոն է ու հոն կը բնակի Աստուած կենդանի, և թէ մենք չպիտի մեռնինք, ոչ. գիտէին թէ երբ կ'պուտակ լոյսը, շատ մը փորձերէ ու վիշտերէ վերջ, բաժնուի մարմինէն, պիտի գտնէ լոյս և ջերմութիւն։ Պիտի ըլլայ հոն ինչպէս առաւօտ մը գարնանաշունչ, և հոգին պիտի վերածնանի գեղեցիկ, ազատ ու երիտաւարդ։

սայլի, Սէվոյի անունները՝ անէծքի ու փոխվրէժի հոմանիշներ եղան, մաղթենք որ փարիզու հաշտութեան համաժողովը, հանուր մարդկութեան համար՝ յառախաբարեան և յուսահատութեան յուշակոթողը չըլլայ։

Հ. Յ. Բ.

գոյավիճակին, ինքնագորգացման և ազատութեան։ Սերայեւոյի ոճիւրը (1914) երեկուան Տանցիկը ստեղծեց, ու Տանցիկը՝ մարդկութեան աղէտներուն ահաւորագոյնը. ներկայ քաղաքական շարժումները նորանոր Տանցիկներ պիտի չկերտեն արդեօք։ 1918-ի պատերազմէն ապրիլ վէր-

Նոյն գիշերը, երբ վերագործայ սենեակս, որ կը նայի San Gallo-ի հրապարակին մէջ՝ Cappellina-ի վրայ, կանչեցի Տանտիրու հին որ ագնիւ կին մ'էր և, իբր մայր մը Գորովասիրտ, կը հոգար ու կը խնամէր այն քանի մը հոգիները որոնք, պարագաներէն

ղութեամբ ըսաւ. «Աստուած կը բնակի ամէն տեղ»։

«Կարելի է այդ - պատասխանեցի ես - բայց ուր Աստուած է, հոն կայ ջերմութիւն և խաղաղութիւն, և ահա թէ ինչու մարդ՝ այդ կղզեակին մէջ՝ կը զգայ սոյն առաւելութիւնը, կը զգայ թէ աւելի մերձ է Աստուծոյ»։

«San Lazzaro կը կոչուի այդ կղզին - պատասխանեց տիկինը - տասնեւութ դարու սկիզբէն, սեփականութիւն հայ Մխիթարեան Միաբանութեան, որ հիմնուած է Կ. Պոլիս 1701-ին. Մխիթար Պետրոսեան անուն քահանայի մը ձեռքով։ Եւ հիմնադրին նուրբ ու լուսափայլ հոգին ժառանգութիւն մը դարձած է իր հետեւողներուն, որոնք բոլոր կրօնական հաստատութեանց մէջ, ամենէն գիտուններն ու յարգումները համարուած են»։

«Ուսուցչութիւն ալ կ'ընէն», ընդհատեցի ես։

«Այո՝ - պատասխանեց - և անհամար է թիւն անոնց՝ որոնք իրենց ընկերական դիրքը՝ աշխարհիս մէջ՝ այս Հայրերուն կը պարտին. և ասոնք, իրենց խոր գիտութեամբ և իմաստութեամբ, բոլոր գիտնական ու բարձրաստիճան մարդոց հիացումը գրաւած են։ Նա փոշեռն իր պաշտպանութիւնը շնորհեց անոնց։ Պայրն, ինչպէս մանուկ մը իր մօրը, անոնց դիմեց երբ վատթարումը և յուսահատութիւնը իր սիրտը կը կրծէին, և անոնք բարեսիրտ գտնուեցան ու իրեն պարգեւեցին մտքի իմաստութիւն։ Պայրն անոնցմէ սուր վեցաւ հայերէն լեզուն, որովհետեւ հայ էին անոնք և Հայաստանէն գաղթած. երկիր մը ուր Ս. Գիրքը գետեղած էր Եդեմի Պարտէզը - ըսաւ տիկինը - , այնքան գեղեցիկ և հրապուրիչ է այդ երկիրը։ Գիշեր ատեն, երբ երկնքի կամարէն լիալուսինն իր արծաթեայ ճամբան կը գծէր լճակին վրայ, և լայն ճամբան երաժշտութեան ձայները, անշարժ ջուրերու վրայէն սահելով, Պայրնի ականջին կը հասնէին, բանաստեղծը սովոր էր նետուիլ



Հայաստէր Քանադացի բանաստեղծ
LAURENCE DAKIN

ստիպուած, հեռացեր էին իրենց ընտանեկան յարկերէն։

«Պատմէ ինձի - աղբրոցի իրեն - պատմէ լճակին մէջ գտնուող այն փոքր կղզեակի մասին, ուր կայ մենաստան մը, տեղ մը ուր կը բնակի Աստուած»։

Տիկինը ժպտելով ինձի նայեցաւ ու պար-

